



ու թուլացած՝ անուղիղ դատու մեծ  
բու անձնատուր՝ միմայնայ իր քայ-  
լերը կուղղէ գէպի արտագալմ,  
գէպի կենդանի նԱՀԱՏԱԿԱԿԻ-  
թիւն . . .

ՄԻՀՐ-ՎԱՐՊ

(Մնացեալը յաջորդով)

**ՏՐԱՍԱԲԱՆՈՂ**

ԵՒ

**ԱՆԿԵՂԾ ԸՂԻԱՆԻՔ**

Ոչ ոք կարող է չգաւել Աստանայի  
և Կիլիկիան ուրիշ թեմերու անկեղ  
և քսանեղանցի խորհուրդներու վերայ :

Այն սրահեր՝ որոնք ոչ չ'ընդուն-  
անապարհներու կորստեան հանգեպ  
անտարբեր կը մնան, այլ եւ՝ իրենց  
ազգին պատկանող ո՛ր եւէ մէկ անձատին  
հասած ճիւղաներուն դէմ անդամ հոգա-  
ծու եւ ցաւորիտ չեն, անոնք նասարակ  
չարագործներ եւ վատեր են. եթէ կու-  
ղեն՝ ասոնք խմբակցութեան մը, կամ  
ո՛ր եւէ կուտակցութեան մը թող պատ-  
կանած ըլլան :

Արեւմտայ առողիւր ստորագրող  
Բողոքիխար, դատնապէս եւ խորագէտ  
ցաւորներէն է Կիլիկիան նախնիներուն  
վրայ, եւ եթէ ինք իրեն եւ ուրիշներու  
ալ չ'անհրաժեշտ որ այդ քարտերը այլ եւ այլ  
պարագաներու մէջ չ'անագործութիւն նիւթ  
ըլլան, ասիկայ դուռ անկեղծարիւն  
պէտք է ընդունիլ. այսինքն խորհրու  
այն զատակարարէն՝ զորս լսելու կը  
խորհին կարող մըջանագործող կեղծ աղ-  
գասէրներ . . .

Ազատութիւն եւ Օսմ. սահմա-  
նագրութիւնը հոչակուելէն վերջն էր  
որ անկի ունեցան Կիլիկիան աղէտներ-  
ըր : Ըստիք չ'կայ որ մենք նգաւորներ  
ենք, Բողոք մեք պաւտրութիւնը կըր  
այն ձեւերով կ'արտայայտենք որ շա-  
հագործութիւն սպաւորութիւնը կը թու-  
ղու մեզ խոչանդողներուն վրայ, այն  
ասան արամարանական զոմ նոր խոչ-  
տանդումներու դուռ բացած կ'ըլլանք :  
Սերկէ զգուշանալ՝ մնա՛նք ազգին՝ ան-  
խուտափելի պարտաւորութենէ կըլլայ  
եւ չ'զղուշտալը քաջութիւն չէ՛ կըր  
ի նկատի ունենանք որ՝ սու ժողով հոչ  
ժողովուրդն է. իր կեանքովը իր  
ստացուածքովը եւ իր պատիւովը . . .

Մեղով ոչ ոքին անձանթ է, որ  
Աստանայի երիտասարդ Առաջնորդը՝  
Մուշեղ Եպիսկոպոս՝ իրաւ կամ անիրաւ  
(ասիկայ աստղել ձեռնհաս աստեանեւ-  
բու գործն է) ամբաստանուած եւ դո-  
տասարաւուած է պատերազմական ասե-  
նի կողմէ, Դասը կրնայ վերադարձնե-  
լի ըլլալ : Եւ թերեւս այդ քննութեան  
մէջ Մուշեղ Եպիսկոպոս յաջողի ար-  
դարանալ իսկ, բայց մինչեւ այդ ար-  
դարացու մը, կրօնային եւ ցեղային  
փոխադարձ զրգուցումներ ասոյ չ'ընդ-  
լու համար, կարելի էր Մուշեղ Եպիս-  
կոպոսը քիչ մը ազգային ակնիւ գործե-  
րէ չեզոքացնել : Մուշեղ Եպիսկոպոս  
այս չեզոքացումովը ազգը մեծ բան մը  
չէր կորսնցունէր : Մինչդեռ Աղէթ-  
ասնորթնայ եկեղեցւոյն մէջ, պատարագ,  
պահանջէս կամ հոգեձեանդիտաի մը սու-  
թիւ արքայաւանկալ Եպիսկոպոսին պա-  
տարագ մատուցանել սալը, պարզա-  
պէս իրաւունք սալ կըր նշանակել  
թուրք իշխանութեանը, որպէսզի այն  
ալ իր կարողին, կրօնային կամ ցեղա-  
կան զգացումէ թելադրուած, պաշա-  
պանէ իր ձէ-վատը, իր ինստն միւր-  
բին, իր չեւ դիտեր ինչ . . . զստեկ  
եւ ինչ : Ասիկայ ազգութեան արիւնք  
չահագործել է՝ պարոն պատարագիչ-  
ներ . . . եւ սպանանդէսի կազմակեր-  
պիչներ : Եւ որ մը ժողովուրդը պի-  
տի ըմբոստացնէք Ձեզի գէմ, հաշիւ  
պահանջելու համար ձեզմէ . . .

Իրաւ է որ Աղաւնուսի Առաջնոր-  
դը Եպիսկոպոսն ան մը չ'հասկցաւ, ու  
չ'պիտի ալ հասկնայ, սպառնով ենք ա-  
սոր, բայց ձեր ալ այդպէս մեր հսկտա-  
կորդները վերջնագրութեան մըող

քաբիթը անպատիժ չ'պիտի մնայ . . .  
Աստուած ամեն ուրեք է . . .

Ն. Ս. Մ. Կ. կուտակցութեան ( )  
հոգր ուղղակ մը ընելու եթէ պէտք  
որեք, 10.000 տկան օրինակէ լուր-  
կացեալ հինգ, տասը եւ աւելի օրի-  
նակ թողցիկ հրատարակեցէք եւ ցըր-  
ուեցէ՛ք ժողովուրդին մէջ, ինչպէս  
ըրիք Կիլիկիան կոտորածներն ա-  
ռաջ . . . սակայն Մուշեղ Եպիսկոպոսի  
նման ամբաստանուող մէկուն, գէթ  
ց'նոր անօրինակ թիւն, զորոծն զեր մի՛  
տաք, այդ ձեր Ն. Ս. Մ. Կ. ք հո-  
յուն հեւ կորակոր կրնայ ընել, գիտ-  
ցած եղիք, եւ իմ այս խոստար՝ կար-  
ծիք՝ որ արամարանու թեմն օրէնքնե-  
րէն կը քաղու, մի՛ արձամարնէք . . .

Մէկ մարդ, քիչ մը իր վեպարին  
ու փիլիսոփայական ամբաստանելով ընդհան-  
րութիւնը մեծ բան մը չ'կորսնցունէր  
բայց ինչպէս ինչեւ անոր բրած պատա-  
րագը կամ արդէն հինգած ձեւով սուած  
քարտը, նոր պահարարներ մատուցու-  
նելու կ'ամպեղ գիտը, ուրկէ պէտք էր  
ւարդարարաքար խորշիլ, ինչ որ չեւք  
ընել՝ կարծեալով թէ՛ մեր զէմիները  
ապուշներ են եւ մեր ըրածը չեն հաս-  
կընար . . . ու վերջի վրայ մտածել :

Սա իրաւ է որ՝ մեր Աղղ. Պատ-  
րարքարանը բողոքեց Մուշեղ Եպիս-  
կոպոսին դատնապարտութեանը գէմ :  
Բայց չենք կարծիք որ պիտի կրնայ  
ընել թէ՛ Մուշեղ Եպիսկոպոսը Հոտմոյ  
պապին պէս անխալ է, այլ կ'ընէ  
թէ՛ « Մուշեղ Եպիսկոպոսին պատի  
հրաւերող կոչնազիրը պէտք էր Պատ.  
րարքարան զրկել » : Բանաձեւ մը՝ որ  
ամբաստանուած Եպիսկոպոսին անմե-  
ղութիւնը չէ որ կը հաստատէ, այլ  
բողոք մէ՛ վարչական ընդունուած սո-  
վորութեանց զմեզած զանցատու թիւն-  
ներու : Այս պարագային, Մուշեղ Ե-  
պիսկոպոսը եթէ իր ժողովուրդին ուսու-  
րէ արիւնք կը յարկի, արդի ցուցում-  
յութիւններէն զգուշանալու էր ինքնու-  
րերարք :

Թիֆլիզի « Հովիւ » Շարաթաթեր-  
թը, իր 23րդ թիւով յայտնապէս կամ-  
բաստանէ Մուշեղ Եպիսկոպոսը, բռնիով  
որ՝ « եթէ ոչ ուղղակի, գոնէ անուղ-  
ղակի կերպով նախապատմուող պէտք է  
եղած լինէր Աստանայի քարտերին » : Եւ  
թէ Մուշեղ Եպիսկոպոս այս ընթացքով  
քայլ զեւ, չասեր պիտի փորձուին Ա-  
ստանայի մէջ թափուած արիւնքերը՝ այդ  
Եպիսկոպոսին փաստի եւ իշխանութեան  
պատանդանը պատարագ չազատել  
նկատելու . . .

Մեր խոստար՝ կործակիչները ամփո-  
փելէ ասոյ՝ ասոնց կարչաւորիւր  
ստուգութիւնը - ամենայն վերապահու-  
թեամբ՝ նկատի կ'անենք, նաեւ սեղոս-  
կան Նիզակ թեմի թիւն մէկ սեղեկատուին  
Աստանայի գրածները, ուրկէ արտա-  
գրած է նաեւ Էմիք օրաթիւթը, հետեւ-  
եալ բառերով : (Տե՛ն հոյն թերթին  
թիւ 177 Յուլիս 20 Հինգշաբթի թիւի )  
« Այցելեցի կ'ընէ, սեղեկատուին »  
(կրնայ վարձկան մ'ալ եղած ըլլալ )  
Աստանայի Ամերիկեան վարժարանի  
Տնօրէնին, որ սեղեկոյն աղէտներուն  
մասին հետեւեալ յայտարարութիւն-  
ները ըրաւ : « Աստիկն դասակարգի  
պատկանող հայերէն ըրդիտեցաւ այս  
չարիքը : »

« Աստեք՝ իր պարզ գործիչներ  
եղան Մուշեղ Եպիսկոպոսի ձեռքին մէջ,  
որ այժմ Երկրպետ աստատանած է :  
Այս կերպը՝ կ'աւելցնէ սեղեկատուին,  
զուրկներէն զէնք քիբիլ սալով կը բաժ-  
նէր ժողովուրդին եւն, եւն, եւն : »

Այսպիսի պարագոյններու մէջ է որ  
թէ՛ Աղղ. քանդակիչներն են, թէ՛ Ա-  
ղու նուսի Առաջնորդին եւ թէ՛ Մուշեղ  
Եպիսկոպոսին թոհմութիւն թելադրե-  
լու պէտքը կ'զգանք, ինչպատ դասաղ-  
ներու Հոյ ժողովուրդին սակաւ ինչ  
հանդուարութեան

Հայ կ'ըմբոստի մը Ռուսիոյ Կասի-  
անա Պոլսանայի մէջ Աճոն Թոյրատի  
կայցելէ, եւ մեծ ընկերարանը իր  
վերջարան կը հարցնէ թէ՛ « ինչո՞վ  
կրնամ ծառայել ձեզ »  
Խմբագրելը - Միայն մի խնդիր .

Թօյրատի - Հրամայեցէք .  
Խմբ. - Ասիկ կըգած ժամանակ  
պաշտպանեցէք Ձեր գրչով ճնշուած  
Հայ ազգը :

Թօյր. - Իմ կրօնս ազգութիւն չի  
ճանաչում, նա ընդունում է միայն  
ւարդարարին, նախարարին եւ եր-  
կայրարարին : Այդ պատճառով ցուած  
եմ, որ չեմ կարող կապարել Ձեր խրե-  
ղիւր :

Խմբ. - Այդ զէպքում, պաշտպա-  
նեցէք մեզ ո՛չ իբր ազգ, այլ իբր մի  
խումբ ւարդար՝ շարունակ ենթակայ  
չարիքի եւ հալածանքների :

Տոտ պերճախոս է Թօյրատի պա-  
տաստանը, մենք իբր ւարդարարներ,  
նախարարներ եւ երկայրարար սե-  
րողներ Յի՛նք մեծ հոհմարին գրչին  
նիւթ չենք կրնար ըլլոր, գոնէ « իբր  
մի խումբ ւարդար » կեանքին, ասոց-  
ուածքին եւ պատուին խնայողներ՝ կըր-  
նանք խոհեմ ըլլալ, եւ ժամանակ մը  
գոնէ՛ սին, ուսուցիկ եւ անխմտա ցոյ-  
ցերէ կա կենալ, ասանց ոչինչ կոր-  
սընցնելու . . .

Գահերէ

ԲՈՒԹԻԹՈՒ

**ՅԻՆԱՆԴԸ**

1

Վերականգնեալ սակ ռեկեակի մեք միայնակ  
Վրջիս ձեռնով դեմքը ծածկած մարտարդն  
կը հաւապի եւ իր սիրտը սքիտուակ  
Ողիկան մե՛ աղիքներով պիտուակ  
Վերականգնեալ սակ ռեկեակի մեք միայնակ . . .

Բրտնաքարաւ եւ վրջանաւ կը հեւայ .  
Իր աչքերը կըրարուիներ սրցակի՛  
կը ձայնեցնէ ջերմ ջերմ շիրտ ւարդար-  
եալ :

Մի կը ըրուակ իր այնչեղ երկարի :  
Բրտնաքարաւ եւ վրջանաւ կը հեւայ . . .

Կը վախեալ ան մանեկ անգո՛ր ստակալի՛,  
Չուղեր մեկնիլ չուղեր մեկնիլ աշխարհէն,  
Եւ հիւանդը հաւապակներ սքիտուակ  
կը հանէ իր սիրտին վերտոս մայրերէն :  
Կը վախեալ ան մանեկ անգո՛ր ստակալի՛ . . .

II

Գիշեր մըն եր, երկիմեկ եր պարզ գեղեցի՛կ,  
Աղաւանդներ կը փայլիլ զոյնով վառ .  
Հրեշտակ մը, կըրարաւղ զեր Աստուի,  
Ե՛րբ Բողոք խեղձ հիւանդի ջերմ սալաւ :  
Գիշեր մըն եր, երկիմեկ եր պարզ գեղեցի՛կ . . .

Առաւօտուն սեւ դազող մը սքիտուակ  
Յաւըր Բայրով յաւապակ գերեզման,  
Ռոնէ վրայ վարդ-չուշակն մի պըսակ  
Դըրած էին կըրեշտակներն անընդամն :  
Առաւօտուն սեւ դազող մը սքիտուակ . . .

Անկող եր ան քարի համեմտ վեկ սիրտով .  
Չկար մեկը՝ որ արտասուեր իր վրայ .  
Հրեշտակներն աղաւանդե աղաւանակով  
կը բրտնաքար անոր դաւրանն սեւ հոյեալ :  
Անկող եր ան քարի համեմտ վեկ սիրտով . . .

Գահերէ

**ԱՂԳԻԱՆՅ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԸ**

ԿԱՄ

Մենք ԱՆԿԵՂԱՆԻՔԸ

Նկատելով թէ՛ սպառնալ սերուն-  
դին բարոյական, իմացական յառաջ-  
դիմութիւնը, ամենէն աւելի, կախում  
ունի իրական սեւի արդի ստացած  
գոտտարակութեան : Ընդունելով, եւ  
այսօր, ճշմարտութիւնը իմ միտի նը-  
շանաբանը ընելով՝ պիտի պատկերացը-  
նեմ ձեր աչքին առջիւ մեք Աղղ. Կոն-  
վարժարանը՝ որ ներսէն փեւս ու ար-  
տաքինէն կարծիք են փայլուն խնձարի  
մը պէս կը ներկայանար մեզի մինչեւ  
ցարդ :

Թէ՛ անցեալ շարժու Աղղ. Գա-  
րտեան վարժարանի մտին գրած յոյ-  
ուած իս մէջ մի քանի առողջ նուերած  
էի Աղղ. Կոնվարժարանին, ու-  
կայն այդպէս ըստ չի նամարկով՝ ա-  
ռանձին գրութեան նիւթ կ'ընեմ զայն,  
ցուցնելու համար որ այժմ նա ոչ թէ՛

նախկին թեմն մըն է՝ այլ անկեղանոց  
մը, բառին ամենալայն աստուովը . . .

Ասանց վարժարանի բարձր վերջեր,  
անոնց դարձանը գտնել յուսալով, Պի-  
տի չի նմանցնեմ զայն այն հիւանդին՝  
որ օրրոտօրէ մահուան մտանալու հետ  
մէկտեղ, գոգաւի կը պահէ իր հիւան-  
դութիւնը :

Մինչեւ այսօր, ասոնց հոտաք-  
քուակութեան մեր աղղիկները կը գար-  
պանան, ըլլա՛յ բարոյապէս ըլլա՛յ ու-  
սումնական տեսակետով սասնց հետա-  
զոտելու թէ՛ մեր վարժարանները իրենց  
գործին կը նուիրուին եւ իրենց վրայ  
գրուած նուիրական պարտականու-  
թիւնները խցածաբար կը կատա-  
րեն, մենք կայր վաստակութեամբ մը,  
ամեն ատաւոտ՝ պայտակ մը եւ հացի  
մըք մը յանձնելով մեր աղղիկներուն  
զատեալ ճամբու կը գնէինք ասանց  
հարցնելու թէ՛

« Աճօր կ'ընթան . . . »

Ահա, հարցում մը՝ որուն պա-  
տասխանելը պիտի ըլլայ յոգեւորութեան  
խիղ նպատակը :

Երբ կը կարգում եւրոպական նա-  
խակրթարաններու մտին գրուած դա-  
նագան նկարագրութեանը, երբ կ'ու-  
սումնասիրեմ աղղ. Կոնվարժարանի  
թեմն կարեւորութիւնը, կամ աւելի  
ճիշտ անձրածեղութեանը, վարժու-  
նիւնը ճշմարիտ կոչուած, շատ մը  
վարժարաններու եւ անոնց իրենց հայ-  
րենիքին սուած ճշմարիտ օրրորդներու  
կենսապատկանները, եւ նախածք մը  
կը նետեմ մեր Աղղ. Կոնվարժարանի  
վրայ՝ գրչի կը կատի, շատա՛յ մը կը  
թող սրտէս եւ ինքնիքն կ'ընեմ .  
« մենք մարդ չենք ըլլար . . . »

Իրօք, պիտի կարեւոր մեր արդի  
անբարոյականացած, այլաստուած, տը-  
ղեւ, նախապաշարեւոյ վիճակէն հեաղ-  
հեալ զուրս գոյ, էրբ մեր սպառնալ  
յոյսերը, մեր աղղիկները կը վստահինք  
այնպիսի վարժարաններու՝ որոնց ար-  
տաքին սեւին իսկ բաւական կ'ըլլայ  
զմեզ խորհեցնելու . . .

Ընդունելով, կ'աղէ՛ք որ ձեր աղղիկ-  
ները վստահան, այլաստուին, կ'աղէ՛ք  
որ այդ սպառնալ մարտութեան candidat  
ները զգործէն դուրս ելլին երեւակա-  
յական թեմ, թեմաւորիկ, օգային պարմա-  
նուհները դարձան : կ'աղէ՛ք որ անոնք  
վարժ՝ ճշմարիտ տանակիկն մը, ճշմա-  
րիտ մարդ մը ըլլալու անկարող մնան,  
հետեւաբար հետեւ իրենց իսկական կո-  
չու մէն : կ'աղէ՛ք որ անոնք նկարագրի,  
բարոյականութիւն ուր անթիւ անհասնելու  
պէտք զգացող ժողովուրդի մը նուիրեն  
սպառնալ իսկ ու կրակ անձանները  
վերջուպէս կը ցանկա՛ք սր մեր բոլոր  
պաշարիկ յայտերը շիրտանանան եւ մեր  
աղղիկները փոխանակ պարձանա՛յ՝ նա-  
խասինք իրեն հայտ թեմն :

Անչոյն ու ո՛չ Արեւմտ թօթուկով  
ձեր երկարատեւ քանի, մէկիլ գնելով  
ձեր ծայրատեղեան թմրութիւնն ու  
անտարբերութիւնը, կ'զրոնացուցէ՛ք  
ձեր ուշադրութիւնը հոս, սա հետեւեալ  
առողջուն մէջ՝ որոնք մեր վարժարան-  
ներուն, անկողնակալութեան գծուած  
պատկերներն են :

Մեր վարժարանները, ընթիւրցո՞ղք,  
ասանց անձեռ իրակուն, աղղ. Կոնվարժարան  
զգացումը, ասոնց աղղիկանց դասախ-  
րակութեան մտին գոգալար մը ունե-  
նալու, եկած են վարժարան պարզապէս  
իրենց պարտաւոր չոյպու. եւ կը հա-  
մարձակեմ մէկ քանիներուն համար ը-  
սել, իրենց երբեմն իրականացնել չի  
կարողացած բաղձանքներուն զատուած  
ստորն նպատակաւ . . .

Արեւոյ որ աստած ենք աղղ. Կոն-  
վարժարան մէջ ստասպող օրրորդներ, ուր-  
ակող որ գտած ենք այսինչ հոգարար-  
ձուներու, այնինչ Էֆէնիաներու ծա-  
նօթ եւ պաշտպանեալ օրրորդներ, հը-  
րաւերած ենք զանոնք վարժարան բա-  
րեգործական կամ բարոյական արարք  
մը ընելու համար, սասնց սակայն աչ-  
քի առջեւ ունենալու հարկբար որ սա-  
նուհներու դասախրակութիւնը, ա-  
սանց նկատողութեան աստեղու անոնց



# ՄԵԾ ՎԱՃԱՌՄՏՈՒՆ ԾԻՍԱԽՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԷ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՂՂՈՑ ԷՕՁՊԷԲՅԷ



### ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻԲ

ՅԱՏԿԱՆՈՐ ԻՐԵՆ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարեթներ անմրցելի տաճան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարեթներու լաւագոյն քանակներու թիւնները գոնեաւ համար հարկ չ'կայ հաս ու հոն ժամախաճու ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարզական ամենաընտիր թէմպէրի տյլ և այլ տեսակները բայց մեր վաճառատունէն, սրբիչ տեղերէ գնելը պարզապէս սխալ է :

Մեր վաճառատունը վերջապէս, գինիքու աճանութեամբ, տեսակներու բազմաբնուութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անմրտելի ապացոյցներէ՝ մին ալ կարգապատ Եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻԲ

պահովութիւն եւ զիմացրութիւն ամէն մէկ բնութեան :

Յօդ. 3. Փողովուրդն է գերագոյն իշխանութեան ազդիւրը, ոչ մէկ մարմին, ոչ մէկ անհատ չի կրնար ունենալ իշխանութիւն, եթէ անիկա ուղղակի չի բղխի ժողովուրդէն :

Յօդ. 4. Իւրաքանչիւր անհատ ազատ է, երբ անիկա կարող է ընել ամէն բան, ինչ որ չի վնասեր ուրիշին. հետեւաբար, ամէն մէկ անհատ կ'օգտուի իր բնական իրաւունքներէն այն սահմաններուն մէջ, ինչ սահմաններու մէջ որ կրնայ օգտուիլ նոյն իրաւունքներէն հասարակութեան իւրաքանչիւր անդամը, այդ սահմանները կ'որոշուին միայն օրէնքով :

Յօդ. 5. Օրէնքը կարող է արդիւնել այն ամէնը, ինչ որ վնասակար է հասարակութեան համար : Այն ամէնը, ինչ որ արդիւնած չէ օրէնքով, թողարկելի է և պէտք չէ հանդիպի արգելքներու : Ոչ ոքի պէտք չէ ստիպել ընել այն, ինչ որ օրէնքով նախատեսուած չէ :

Յօդ. 6. Օրէնքը՝ ընդհանուրի կամքի արտայայտութիւնն է . բոլոր քաղաքացիները իրաւասու են անձամբ կամ իրենց ներկայացուցիչներու միջոցով մասնակցելու օրէնքութեան : Օրէնքը պիտի ըլլայ ամէնրի համար միաստեակ, ըլլար անիկա պատճառակա՞ն թէ պաշտպանողակա՞ն : Իւրեր քաղաքացիները, ըլլալով հաւասար օրէնքի առջ, հաւասարապէս կարող են ըստանձնել ամէն տեսակ հանրային պաշտօններ, տեղեր, իրենց ընդունակութիւններու համապատասխան, առանց որ եւ է ուրիշ տարբերութիւններու, քացի իրենց տաղանդին ու առաքինութիւններուն աւարելութիւնէն :

Յօդ. 10. Ոչ ոք պէտք չէ նեղուի իր համոզումներուն համար, ըլլան ա՞նտեք նոյն իսկ կրօնական, միայն ա՞նտեք արտայայտութիւնը չի խախտէ օրէնքով սահմանուած հանրային կարգիւրը :

Յօդ. 11. Մտքերու և կարծիքներու ազատ փոխանակութիւնը մարդուն ամենաթանկագին իրաւունքներէն մէկն է, և սաի և իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի ազատ խօսելու, գրելու և տպելու, միայն մէկ պայմանով՝ որ անիկայ ենթակայ է պատասխանատուութեան, երբ օրէնքով սահմանուած զեպքերու մէջ ի չարը գործ կը գնէ այդ ազատութիւնը :

### ԱՀՈՒՅԼԻ ՏՈՒՄ

Թօք-Դաբուրի Ազգ. վարժարանին գանձանակներէն 3-4 մէծիւրի գումար մը կը զրպանէ վաճականի քով պաշտօնեայ Համբարձում Թումիկեան, որ սակայն կը յլստանայ մաս առ մաս վճարել այս գրամն և կ'իմրէ որ Թալ. Խորհուրդը զինքը կառավարութեան չը յանձնէ : Թալ. Խորհուրդը կ'ստիպէ անմիջապէս վճարել. Համբար-

ձում իր անկարող ըլլալն յայտնելով կ'իմաստէ իր պատուոյն խրնայել և զօրմը չ'հրապարակել, որով պաշտօնէն գուցէ հանուէր և անկարելի ըլլար իր պարտքն հատուցանել, բայց Թալ. Խորհուրդն անգրողելի կ'մնայ և ստիկանութեան կը յանձնէ Համբարձումը, որ բաւական զանազանութեամբ սուղա կ'արձակուի : Թալ. Խորհուրդն առանց նկատի առնելու Համբարձումի թախանձանքները, դատի կ'գրիմէ և երկէ Համբարձում կոչնագիր կ'ստանայ դատարան ներկայանալու համար : Ասոր վրայ Համբարձում գաւառի թեմաբ լեցուած զինեան մը մէջ կ'արբնայ և թաղին սրճարանն երթալով այնտեղ գտնուող Թալ. Խորհուրդն անգամներէն երբեք Հաչիմեանն ու Արթուրի Արդիկեանը կ'այցանէ զինքը դատի կոչած ըլլալուն համար : Անոնք ալ կը գիտնան ստիկանութեան Բոմբէրին, որ կուգայ և կուզէ ձերբակալել Համբարձումը : Արդեւ անգամ մը գտնաիծուած ըլլալով, Համբարձում չուզեր յանձնուիլ և կ'ընդդիմանայ : Խնդիրը մեծնալով երկուստէք զէնք կը յաչին. Համբարձում որտեղն կը վիրաւորէ Բոմբէրը, որուն արձակած գնտակները շին հանդիպիր Համբարձումին : Երկուստէք արձակուած զընտանիքներէն մին սրճարանէն դուրս վրիպելով վայրկեանապէս կ'ապանէ նոյն միջոցին ձիով անցնող հայ նաչպան մը : Այս խառնաշփոթութեան մէջ Համբարձում կ'փախչի իր տունը, որ կը պաշարուի զօրաց կողմէ : Համբարձում տեսնելով որ ազատելու ճար չ'կայ, քունքին ու կզակին տարճանակ պարպելով, անձնասպան կ'ըլլայ կը զրէ Բիզանդիլոն :

### ՉԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ


Օտմ. Խորհրդարանի մէջ նկատուած թեմաբ համար, ոչ-Իսլամներու զինուորագրութեան Յանձնաժողովը հետեւեալ օրինակովը պատրաստած է, որ Ազատանահե կ'արտադրենք :

Յօդում 1. - Օտմ. ոչ-Իսլամ տարբերէն գանձուած զինուորական աւարքը, 1325 տարիէն սկսեալ ջնջուած է : Հետեւաբար թէ՛ ոչ-Իսլամներէն և թէ՛ կ.Պօլաթ և ուրիշ բացառիկ վայրերու ժողովուրդէն օնտեք՝ որոնք մարդահամարի ստանդարտը մէջ արձանագրուած են և զինուորագրութեան տարիքին մէջ կը գտնուին : 1325 տա-

## ՍԻՆԿԵՐ

Պատարի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիմաց Գաթէ Տը Լա Պուրսի կից  
Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՉԱՔՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՄՈՍԵՍԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ  
Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՄԻՆԻՍՏԵՐՆԵՐՆ ԵՆ ՔԵ ԱՍՏՆԳԺԷ  
միջոց. գործ 17,000,000 ծախուած է :

409 հ աւելի վիւրջական և անսպիւքով վարձարուած, երաշխաւորեալ մեքենաներ,  
ԱՄԵՆԻՆ ՄԵՋ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ  
Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանոցիսին մէջ ասացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ  
ԱՅՍԵՐՅԱՅՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ  
ՆԵՒ ԲԱՉԱՔՆԵՐՈՒՆ ԱՐՔՈՒՆԵԱՅ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԵՅԻՂԱԳԼՆ ՅԱՆ  
Չրի գտնիք և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախողատուններուն մէջ,  
Վճարմանց գիւրութիւն  
Փոխանակութիւն հիւներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ յաչկանչիմ  
ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Երէն սկսեալ եւ հիմայ կիրարկուող կանոնադրին արամագրութեանց համաձայն զինուորագրութեան պիտի ենթարկուին :

Յօդում 2 - Տեղակա՞ն կրօնական պաշտօնեաները իրբեւ անգամ պիտի գտնուին այն ժողովներուն մէջ, որոնք ըստ օրինի պիտի կազմուին՝ ոչ իսլամներու քննութիւնը և վիճակ ձը կըլու գործողութիւնը կատարելու պաշտօնով :

Այդ տարբերուն վերաբերող պաշտօնի վրայ գտնուող և անպաշտօն պատրիարքները, կաթողիկոսները, խախտմ պաշինները, մետաղագիտները, եպիսկոպոսները, տրիմոնարիաները, վարդապետները, մեծ խախտները, վանքերու վանահայրերը և մեծաւորները, կրօնական ծառայութեանց մէջ պաշտօնավորող քահանաները, սարկուսպները, խախտները, վանքերը բնակող վարդապետները ու քահանաները, կղերականի ու խախտի վարժարաններու ուսանողները, կրթական նախարարութեան կողմէ պաշտօնական հանգամանքը հաստատուած բարձրագոյն վարժարաններու ուսանողները, միայն մէկ ուսուցիչ ունեցող զիւղբու պաշտօնական նախնական վարժարաններու և զիւղբադպետներու նոյն կարգի վարժարաններուն Ստալին. երկրորդ ու երրորդ ուսուցիչները պիտի ըլլան ա՞յն անհատներէն, որոնց զինուորագրութիւնը յետաձգուած է :

Այս կանոնադրին կիրառուել կը վերաբերի Պատարագական, Ներքին և Ելմական նախարարներուն :

### ԳԻՒՐՈՒԹԻՒՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆ

Ալ հոգ մի՛ ընէք թէ ձեր կարի մեքենաները Շայեալի մը զիտուն վրա՝ վրած հաս ու հոն պիտի փոխադրէք նորոգելու համար :

Պ. Սարգիս Թաչեան իրեն զիմող շատ մը յաճախողներէն քաջալերուած, ատենէ մը ի վեր իր պաշտօնը թողալով, յատուկ կառք պատրաստած է և իր շրջուն ու շարժական խանութը «Վարժ» ին (անոր պզտիկ ձիուն անունն է) բարձրած ամէն թողէ կանցնի ամէն օր և ամէն ժամ :

Զինքը ճանչնալու դժուարութիւն չկայ : Պզտիկ ձիու մը քաշած կառքին վրայ երբ մեքենաներու գործիքներ տեսնէք, որուն շար կողմը ա՞մին լեղուով գրուած է, մանուաւոր Réparation des Machines, անմիջապէս կամ «Վարժ» յիշեցէք, և կամ քիչ մը անգին Սարգիս Թաչեանը տեսնելու պիտի յարկալու, իր կառքոյ կառէ քոսեպին մէջ : անիկայ ոչ միայն կարի մեքենաներու նորոգութիւն կըլն անհման յաջողութեամբ և երաշխաւորեալ, այլ և նոր մեքենաներ ալ կը հայթայթէ :

Չ'մոռնանք նաև կարի վաճարաններու և ֆոնօկրաֆներու նորոգութիւնը և նորերու հայթայթումը :

Պ. Թաչեան այս գիւրութիւնները ընծայելով իր նմաններուն ծառայած ըլլալու գոնուակութիւնը պիտի ունենայ, և քիչ մ'ալ գրամ չաճել պիտի ուզէ, իր պիտիակներուն պատեալարկութեանը յաւակցելու համար :